փոքրիկ, Հաղբու գիւղական ժողովրդին բաւական տարածութիւն ունեցող մի եկեղեցի է, բայց աչքի է ընկնում իւր կոկիկ, գեղեցիկ, նրբանկար և ներդաշնակ կերտուածով. բեմը, սեղանը, խորանները, աւազանը, լուսամուտները, դռները և այլն և այլն մի մի մանրանկար են իսկական գաղափարական եկեղեցու մասերի. պատկերները, բոլորն էլ Ռուսաստանի մայրաքաղաքներում լաւագոյն գեղարուեստների արտադրութիւն, Հրաշալի և Հայկական, մանաւանդ բեմի վրայի Աստուածամօր և Փրկչական պատկերը, որպիսին չի կարելի տեսնել Թիֆլիսի բազմաթիւ Հայ եկեղեցիներում. Նոյնը կարելի է ասել և զգեստների, անօթների ու ղարդերի մասին. միով բանիւ եկեղեցու բարերարը աշխատել է այդ վիրախօս գիւղում մի գեղեցկագիր բարձրավանդակի վերայ կառուցանել մի փոքրիկ եկեղեցի—թանգարան, որից հիանում են ոչ միայն տեղական բնակիչները, այլ և քաղաքների բոլոր այցելուներ։ Ինչպէս տեղեկացանք 'պարոնը դիտաւորութիւն ունի եկեղեցուն կից բակում կառուցանել և մի բնակարան քահանայի համար։ Պատիւ և փառք նորան։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Մեծարգոյ Տ. Խմբագիր

Սեպուհ պարտականութիւն եմ համարում ինձ Ձեր պատուական հանդէսի միջոցով սրտագին շնորհակալութիւնս յայտնել և օրհնել այն բոլոր հաստատութիւններին և անձերին, որոնք անձամբ, հեռագրերնով և նամակներով շնորհաւորեցին իմ Նշանակուելը յառաջնորդութիւն Թեմին Հայոց Վրաստանն և Իմերէթի։

1904 Թ. 13 Հոկտեմբերի — *Գարեգին եպիսկոպոս։*

Տփխիս

ՍԱՆԱՀՆԻ ՎԱՆՔԻ ՀԱՅ ԳՐՉԱԳԻՐՆԵՐ։

Ս. Էջմիածնից մեզ հաղորդում են, որ Սանահնի վանքում գտնուած քսաններօթն հատ բաւական կարեւոր ձեռագիրներ նոյն վանքի նախկին վանահայր և այժմ Թեմիս նորընտիր Առաջնորդ սրբազան Գարեգին եպիսկոպոսի կարգադրութեամբ ուղարկուել են Վեհափառ կաթուղիկոսին ս. Էջմիածնի մատենադարանում պահելու համար։ Գրչագիրներից հնագոյնը գրուած է հայոց Զ և փրկչական 1451 թուին, իսկ նոցա մէջ եղած Ընդհանրականի մի յիշատակարանից երեւում է, որ այդ

գրչագիրը «Սանահնու սուրբ Աստուածածին վանուցն է, զոր հանեցաք ի ՅԱՃԱՌԱՆՑ այրեցն 1787 թուին»։

Այս օրերս թեմիս ս. Առաջնորդի միջոցով նոյն նպատակով ս. Էջմիածին է ուղարկուած հանգ. Արգար Յովհաննիսեանի վերջին կամքի համաձայն՝ վերջնիս 19 հայ գրչագիրները, որոնց մանրամասն և ընդարձակ ցուցակը կազմել է պրոֆ. Հ. Ֆինկը, որ անցեալները լոյս տեսաւ Լայպցիգի (†) Նուբար Փաշամաճեանի հայկական տպարանից։

ՎԱՆՔԻ ԾԽԱԿԱՆՆԵՐԻ ԺՈՂՈՎ

Հոկտեմբերի 10-ին կայացաւ Վանքի աւագ եկեղեցու ծբխականների վերջին ժողովը նախորդ երեցփոխանի հաշիւների մասին՝ հաշուատեսների զեկուցումը լսելու և նոր երեցփոխանի առաջարկած նախահաշիւը հաստատելու համար։

Հաշուատես Յանձնաժողովը ներկայացրեց ժողովին նախորդ երեցփոխանի 6½ ամեայ հաշիւների մէջ նկատուած թերութիւնները. ժողովը որոշեց այդ բոլորը յանձնել կոնսիստորիայի տնօրինութեան օրինական բացատրութիւն պահանջելու նախորդ երեցփոխանից այդ ամենի դէմ. և որոշեց սպասել վերջնիս 7 օրում քանդել եկեղեցական փողով գնուած տունը։

Այնուհետև ժողովը միաձայն հաստատեց նոր երեցփոխան պ. Ա. Բաբեանի առաջարկած նախահաշիւը, որի մէջ ամենակարևոր կէտն այն է, որ նա վերացնում է բոլոր գանձանակադրամների շրջեցնելը (բացի մի անգամից, որ քահանան կը շրջեցնէ յօգուտ եկեղեցու) և դոցա փոխարէն նշանակում է առճիկ եկեղեցու բոլոր պաշտօնեաներին։